Գրախոսություն

Կրթահամալիրի Քոլեջի «Գրադարանային գործ» մասնագիտության շրջանավարտ **Մարգարիտ Մինասյանի** դիպլոմային աշխատանքի թեման է՝ «Դպրոցական գրադարանը համայնքին ծառայող ռեսուրս-կենտրոն»։ Դիպլոմային աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ իրենց ենթագլուխներով, և եզրակացությունից։ Հեղինակը համառոտ ներկայացնում է Դալարի միջնակարգ դպրոցի հիմնադրման պատմությունը, ապա սահուն անցում անում դպրոցի գրադարանին, ներկայացնում գրադարանի ֆոնդերը, պահպանվող գրականության քանակը, պատմում այն համագործակցության մասին, որ կա, գոյություն ունի մի կողմից՝ դպրոցի գրադարանավարի և ուսուցիչների միջև, մյուս կողմից՝ գրադարանավարի և դպրոցի աշակերտության միջև։

Մարգարիտ Մինասյանի դիպլոմային աշխատանքը վկայում է, որ որպես ապագա գրադարանավար՝ նա բավականին տեղեկացված և հմուտ է իր գործում, գրադարանավարի իր աշխատանքները կազմակերպելու պրակտիկ փորձ ունի։ Իր աշխատանքում հեղինակն անդրադառնում է նաև Դալարի համայնքային գրադարանին և ներկայացնում այն համագործակցության մասին, որ կա դպրոցի և համայնքի գրադարանների միչև։ Եզրակացության մեջ հեղինակը կարևորում է այն փաստը, որ համայնքների գրադարաններն այսօր պետական հոգածության, նոր ու ժամանակակից գրականությամբ համալրվելու, երիտասարդների մշտական այցելության կարիք ունեն։

Դիպլոմային աշխատանքը, իր ամբողջականությամբ հանդերձ, զերծ չէ թերություններից։ Օգտագործված գրականության ցանկում չկան օտրալեզու աղբյուրներ։ Աշխատանքում առկա են վրիպումներ, որոնք, սակայն, չեն աղավաղում դիպլոմային աշխատանքի ընդհանուր պատկերը։

Գրախոս՝ Թամար Ղահրամանյան